ԲԱԶՄԱՎԷՊ

ՕՐԱԳԻՐ

ԲՆԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՏԵԼԵԱՑ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 19. **1844** ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Օդաշարժ նաւ :

Բազմավէպ օրագրիս մէջ[1] ծանուցեր էինք թէ Անգղիայի ու Գաղղիայի մէջ շոգիի տեղ օդի ճնշմամբ մեքենայ շարժելու ետեւէ են . և հիմա երկու ամսէն 'ի վեր է որ Քինկսթոն ու Տալքէյ քաղաքներուն մէջտեղը բացուեցաւ օդային երկըթէ ճամբայ, որ տասուերկու կառքով թէ ճամբորդներ և թէ ապրանքներ կը տանի կը բերէ : Աս փորձովս ամէն ուսումնականաց միտքը համոզուեցաւ, թէ ասոր օգուտը հասարակ երկաթի ճամբաներէն աւելի պիտի ըլլայ : Անգղիացւոց փարլամէնթը ուզելով յայտնի իմանալ աս օդաշարժ ճամբուն առաւելութիւնները, ուսումնականաց քննութեանը յանձնեց . և տեսնելով որ հասարակ շոգեկառքերէն շատ աւելի արագ է ասոր ընթացքը, անկէ զատ՝ ճաթելու կամ այրելու վտանգ չունի, ծախքը շատ պակաս է, և վերջապէս հասարակ շոգեկառքերէն շատ աւելի դիւրագործածելի է, հաւանեցաւ, ու ազատութեան գիր տուաւ որ ծաղկեցընեն ու առաջ տանին աս կերպ ճանապարհորդութիւնը :

1 Հատոր Ա, երես 338 :

Ջերմաշարժ մեքենայ :

Գաղղիացի օրագիրները կը ծանուցանեն թէ Ֆրանչոյ անունով գաղղիացին նոր գիւտ մը հնարեր է մեքենաներ շարժելու, որուն զօրութիւնը և ըրած գործողութիւնը հաւասար է շոգեշարժ մեքենաներուն : Աս նոր գիւտին սկիզբն է օդի կամ կազի առաձգութիւնը . այսինքն որովհետև ամանի մը մէջ օդ լեցընելէն ետքը՝ թէ որ կրակի ցուցընենք, մէջի օդը այնչափ կ'ընդարձակի՝ որով կրնայ նաև ամանը ճաթեցընել . ուստի հիմակուան նոր գիւտն ալ աս սկզբան վրայ հաստատուած է, որ մեծկակ ամանի մը մէջի օդը տաքցընելով, վրայի մխոցներուն շարժում կուտայ, և անով մեքենաներ կը շարժէ : Կ'ըսեն թէ Լոնտրա փորձը ըրեր են . յուսանք որ քիչ ատենէն ասոր վրայ աւելի ճիշդ տեղեկութիւն մը տանք :